ցնցելոյն իբր սկսաւ մեղմանալ, սակայն անընդհատ վերստին և աւելի ուժգնութեամբ դողացոյց զերկիր ընդ երկար. և մինչդեռ մեղմանալ կամէր, ահա աւելի ուժգնութեամբ վերստին և ընդ երկար ցնցէր և դողացուցանէր, և վեր վեր կը նետէր զչինուածս, մինչև յուսահատիլ ամենեցունցս: Արդ բովանդակն տեսեաց զրեթէ 5 րոպէս. բայց ոչ հաւատացողքն, որք ասեն թէ եթէ տեւէր 5 րոպէս, փլուցանէր զամենայն չինուածս. բայց հաստատեն թէ տեւեաց երիս րոպէս: Ի շարժմանէս այնքան չինուածք փլան, մինչև փոշեաց երևիլ իբրև զմառախուղ ի վերայ ստամպոլու: Զկնի այսր մեծ շարժմանս, դարձեալ ցնցեաց: Լանց սակաւ ինչ և դարձեալ բաղխեաց. և գրեթէ կէս ժամ, գուցէ աւելի. սըխ սըխ շարժէր: Դարձեալ ի 20 ժամուն ուժգինս ցնցեաց, իսկ մանր մունր բազում անգամ: Ցերկրորդ աւուր՝ դարձեալ քանի անգամ, բայց մանր մունր: Մինչև ցօր գրելոյս, գրեթէ անթիւ անգամ ցայգ և ցերեկ լինէր ասէին բազումք...: Արդ յառաջին գետնաշարժութենէն, որքան տեղիք փլան, ի սկզբան անգր ոչ այնքան երևեցան. քանզի թէպէտ փլան բազում մինարէք, ծխնելոյզք, գմբէթք և խանք, սակայն զկնի աւուրց յորժամ սկսան քակել զսախտածսն՝ գտան չվնասեալ գրեթէ և ոչ մի կերտուած որ ի կրէ և ի քարէ: Իսկ փայտեղէն չինուածքն թէպէտ ոչ փլան, սակայն ամենեքին վնասեցան: Ի սամաթիա անթիւ տունք, իսկ ի եէտի խուլէն, գրեթէ բովանդակ չինուածքն թէև փայտեղէնք, կործանեցան սպանմամբ բազմաց անծանօթից:

Ճէվահիր պէզէստանն, թէպէտ ոչ կործանեցաւ, սակայն ասին թէ խուրտուխաչ եղեալ է: Ղուլումճու չարշըին գմբէթքն, գրեթէ զամենայնն փլուցին. իսկ ոչ փլուցեալքն՝ չեն առանց որոգայթի: Կործանեցաւ զոֆճիենց խանն, և որ հանդէպ նորա: Փլան գըմբէթքն խալբախճոց և սրբխճոց: Վնասեցան և ընդ մասին փլան ամենայն խանքն, բաց ի նոր խանից, զորս չինեաց այս սուլթան մուստաֆան:

Բնակիչքն վէզիր խանին, ելեալք յօտայէն իւրեանց և ի փախչիլն, անկաւ ներքին գմբէթն որ առաջի դրան, և սպան զխուռն մարդկանց: Ոմն տիրացու զէորգ անուանեալ (ոչ Նիկոմիդացին, որ եղև փեսայ կրակ գրիգորին, այլ այլումն) որ տեղեակ էր բազում լեզուաց, մանաւանդ տաճկաց, որ և զօրացոյցն մեր թարգմանեալ, ետ թագաւորին, ըստ հրամայելոյ նորա, սա ի փախչիլն և յելանելն յօտայէն իւրմէ, ճմլի ընդ կամարաւ դրանն և ընդ նմա մանուկ մի ևս. քանզի այս զէորգ ազապ էր և նստէր ի վէզիր խանն.... Փլաւ և փոքր խան մի, յորում եղեալ արապ աղախինք, փախեան և ելին արտաքս ի փողոցն և անդէն փլաւ որմն խանին և սպան զամենայն աւելի քան զտասն անձինս, ընդ նոսին և զլոյծ մի եզանց: Ի բազում տեղիս, ի բառնալն զփլուցեալսն, գտան բազում զէշք մարդկան, թէպէտ և ուր ուրեք գտան ոմանք կենդանի...: Իսկ ի դալաթիա գետնաշարժն եղև մեծ և երկայն որպէս ի ըստամպոլ, սակայն որպէս երևի՝ չէ այնքան բռնութեամբ իբրև զնորայն. որպէս և նորայն, չէ՛ այնքան բռնութեամբ իբրև զսամաթիոյ և զպալատին: Արդ ի դալաթիա վնասեցաւ պէզէստէնն, զուռչունլու խանն, և բազում գմբէթաշէնք և որմունք: Վնասեցաւ և եկեղեցին ճիզուիթաց և խուլէ նորա: Ի դալաթիա զուլէէն անկեալ է մեծ քար մի: Իսկ փայտեղէն չինուածքն գրեթէ ամենեքին վնասեցան. եկեղեցին Երրորդութեան ի տեսրտեօլաղզըն, վնասեցաւ աներևոյթապէս:

Բայց ո՞ւր դիցուք զերկիւղն, զոր տան միմեանց ժողովուրդքն. քանզի ուր երթայ ոք, լսէ զբօթս. ոմն թէ՝ կըսեն քի՝ տահա բան չատ պիտի ըլլայ. ոմն թէ՝ կըսեն քի չատ արուն պիտի ըլլայ. ոմն թէ, ջրհեղեղ պիտի ըլլայ. ոմն թէ կէնէ մէկ մեծ զէրզէլէ մը պիտի ըլլայ. ոմն թէ յայս ինչ օր՝ ինչ որ ըլլալու է նէ, պիտի ըլլայ:... Ի սկիզբն, բազումք վրանաւ նստան ի պարտէզս, ի պօստանս և ի լերինս. իբր թէ՝ աճա՞պ ո՞ր սահաթ գետինը պիտի անցնինք կամ պիտի մեռնինք: Արիւն ամենեցուն ցամաքեցաւ:

Պարութխանան որ ընդ մէջ մախբրքէօյին և ստէֆանոյին, բովանդակ փլաւ: Ուստի առ այժմ ամենայն որմնադիրքն անդ և ի ըստամպոլ զպէզէստէնն չինեն, վասն որոյ այլ տեղիք այժմ դադարեալ կան...:

1766 յունիսի 18 Հ. Յակոբոս վրդ. Զամչեանց
[Կ. Պոլիս] Մխիթարեան